ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության
Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոնական
քննչական բաժնի քննիչ Արա Պողոսյանին

Դիմող՝

թիվ 13130610 քրեական գործով տուժողի
իրավահաջորդ Սուսաննա Անտոնյան
ք. Վանաձոր, Նարեկացի 4/13

Սուսաննա Անտոնյանի ներկայացուցիչ
Արթուր Սաքունց
Ք. Վանաձոր Տիգրան Մեծի 59

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

(թիվ 13130610 քրեական գործի շրջանակներում կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությանը մասնակցելու և փորձագետներին հարցեր ուղղելու, փորձաքննություն նշանակելու որոշման պատճենը տրամադրելու մասին)

2013թ. դեկտեմբերի 14-ին Սուսաննա Անտոնյանը ստացել է Ձեր թիվ 714-39971 գրությունը, ըստ որի առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածով տուժողին վերապահված իրավունքներով ներկայացնել միջնորդություն կապված թիվ 13130610 քրեական գործով նշանակվելիք կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության վերաբերյալ:

Իրացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածը և տուժողին վերապահված իրավունքները միջնորդում եմ.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տրամադրել մինչև փորձաքննություն կատարելը փորձաքննություն նշանակելու մասին Ձեր կողմից կայացրած որոշման պատճենը

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

2.1. ի՞նչ ճանապարհով կարող էր Արման Անտոնյանը ձեռք բերել սուր լյարդային անբավարարվածություն

2.2. Ա. Անտոնյանը «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում բուժում ստանալուց առաջ բժշկական հաստատություն դիմելիս ինչպիսի բժշկական զննության է ենթարկվել և այդ բժշկական զննությամբ կարող էր հայտնաբերվել արդյո՞ք առողջական խնդիրների առկայություն և ի՞նչ առողջական խնդիրներ են հայտնաբերվել նրա մոտ

2.3. «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում քանի անգամ է Արման Անտոնյանի նկատմամբ պարիենտալ միջամտություն կատարվել,

2.4. ո՞ր բուժհաստատությունում է կատարվել և ինչպե՞ս

2.5.արդյո՞ք կարող էր դրա հետևանքով Ա. Անտոնյանը վարակվել «հեպատիտ բ» հիվանդությամբ

2.6. եթե Ա. Անտոնյանի մոտ առկա «պրոստատիտ» հիվանդությունը ինֆեկցիոն բնույթի է եղել, ապա «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում այլ ինֆեկցիաների հետազոտություն պարտադիր էր անցնել, թե ոչ

2.7. Ա. Անտոնյանի առողջական վիճակի վատթարացման ժամանակ կիրառված բժշկական օգնությունը ինչպիսի ազդեցություն կարող էր թողնել նրա առողջական վիճակի վրա

2.8. ինչպիսի՞ բժշկական օգնություն պետք է տրամադրվեր Ա. Անտոնյանին, որպեսզի հնարավոր լիներ փրկել նրա կյանքը

2.9. մինչ մահվան վրա հասնելը Ա. Անտոնյանի մոտ եղել է արդյո՞ք արյունահոսություն, թե ոչ

2.10. շտապօգնության աշխատակիցների կողմից Ա. Անտոնյանին զննելով և սխալ ախտորոշում տալով չեն արագացրել արդյո՞ք նրա մոտ առակա վիրուսի հետագա զարգացումները

2.11. շտապօգնության աշխատակիցների կողմից Ա. Անտոնյանին զննելու արդյունքում, եթե տրվեր ճիշտ ախտորոշում հնարավոր կլիներ արդյո՞ք փրկել նրա կյանքը

2.12. Արման Անտոնյանի մոտ առկա հիվանդությունը կարող էր արդյո՞ք սեռական ճանապարհով անցնել նրա կնոջը, թե ոչ:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն միջնորդության մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատաբժշկական փորձագետների իրավասությունների մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ միջնորդում եմ Ձեր թույլտվությամբ թույլատրել Սուսաննա Անտոնյանին և նրա ներկայացուցիչ Արթուր Սաքունցին ներկա գտնվել փորձաքննության կատարմանը:

Դիմողներ՝ Սուսաննա Անտոնյանի ներկայացուցիչ
Արթուր Սաքունց

Ս. Անտոնյան

19.12.2013.